ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 83

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

27-ը սեպտեմբերի 2025թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյան)

2. 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ՝ Ա.Յ. Դավթյան)

3. ԵՊՀ ԻՄ 2026թ. առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)

4. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հետազոտական թեմաների հայտերի ներբուհական մրցույթ հայտարարելու մասին (2025-2026 ուստարի):

   (*Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա.Հ. Մակարյան)*

5. Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 2024-2025 ուստարվա գործունեության մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ՝ Ս.Ա. Աբազյան)

6. Ընթացիկ հարցեր:

   6.1. Արտաբյուջետային անվանական կրթաթոշակների մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Նա մանրամասն ներկայացրեց նիստերի ժամանակացույցը, նշեց, որ ժամանակացույցը կազմվել է համաձայն ԵՊՀ ԻՄ ռազմավարության և ԵՊՀ Գիտական խորհրդի համապատասխան ժամանակացույցի, ընդգրկվել են նաև ստորաբաժանումների ղեկավարների և գիտական խորհրդի անդամների կողմից առաջարկները:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը և այլք:

Առաջարկվեց հաստատել 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 83/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2025-2026 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի,
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երկրորդ **՝** «ԵՊՀ ԻՄ 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք 13 անվանական կրթաթոշակ, որից 11-ը ԵՊՀ ԻՄ բյուջեի հաշվին, իսկ 2-ը՝ արտաբյուջետային: 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակի դիմել են թվով 21 ուսանող, որից 8-ը մրցույթով չեն անցել: Ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկվել են անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների թեկնածությունները, հաշվի են առնվել ուսանողների առաջադիմությունը, գիտական և հասարակական ակտիվությունը: Ընտրվել և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն ենք ներկայացնում 13 անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների ցուցակը (տես հավելված 2):

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Դ. Ալեքսանյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Աբազյանը և այլք:

Մասնավորապես նշվեց, որ մրցակցությունը դժվար էր, և փոքր ՄՈԳ-ի տարբերությունների դեպքում առաջնայնությունը տրվել է հասարակական ակտիվությանը:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 83/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 8-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 2-ի,
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

Օրակարգի երրորդ **՝** «ԵՊՀ ԻՄ 2026թ. առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանի հաղորդումը: Նա նշեց, որ կրթական ծրագրերի ցանկը կազմելու համար մեզ կարող է օգնել նախորդ տարիների ընդունելությունների տվյալների վերլուծությունը:

ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյանը ներկայացրեց հետազոտության արդյունքները, թե ինչ քանակությամբ ուսանողներ են գնում այլ բուհեր: Մասնավորապես նշվեց, որ շուրջ 30

ուսանող, հիմնականում Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտությամբ (10-ը՝ ԵՊՀ, 10-ը՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, 10-ը այլ բուհեր) գնացել են այլ բուհեր սովորելու։

Նա նշեց, որ մարզից հիմնականում դուրս են գալիս Նոյեմբերյան և Բերդ համայնքների ուսանողները, և առաջարկվեց ուսումնասիրել Նոյեմբերյանի ուղղությամբ տրանսպորտային կապ ապահովելու հնարավորությունը (ինչպես դա արվում է Դիլիջանի հետ)։

Մեծ թիվ են կազմում այն ուսանողները, որոնք գնում են այն մասնագիտություններով, որոնք ԵՊՀ ԻՄ-ն չունի (օրինակ՝ բուժական գործ, ստոմատոլոգիա, միջազգային հարաբերություններ և այլն)։

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ շատ ուսանողներ գնում են Բրյուսովի անվան համալսարան, քանի որ այնտեղ լեզվի շեշտադրումը շատ ավելի մեծ է քան Մասնաճյուղում։

Նշվեց, որ մանկավարժության ոլորտում մարզից գնացողները հիմնականում (մոտ 20 ուսանող) նախընտրել են Ֆիզկուլտուրայի ինստիտուտը։

Մ. Մ. Օթարյանը ընդգծեց, որ ԵՊՀ-ում բոլոր կրթական ծրագրերը նախատեսում են իրականացել «բիզնես պլանի» տարբերակով՝ հաշվի առնելով ֆինանսական արդյունավետությունը, և նոր ծրագիր մտցնելու դեպքում պահանջվելու են ֆինանսական հաշվարկներ ու հետազոտություններ։ Մ. Օթարյանը նշեց, որ անհրաժեշտ է Բնագիտական ֆակուլտետում ունենալ երկրորդ մրցունակ կրթական ծրագիրը, և հանձնարարեց Բնագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատարին կազմակերպել քննարկումներ և ներկայացնել առաջարկ։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք. Հարությունյանը, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ Մ. Ճաղարյանը, ՈՒԽԸ նախագահ Դ. Ալեքսանյանը, ՈՒԳ նախագահ Ս. Աբազյանը և այլք։

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ լիցենզավորման կարգը փոխվում է և կկոչվի նախնական հավատարմագրում, ինչը ավելի լուրջ գործընթաց է լինելու։ Ս. Աբազյանը բարձրացրեց իսպաներենի որպես մրցունակ լեզու ավելացնելու հարցը։

Ընդհանուր առմամբ արտահայտվողները կարևորեցին կատարված վերլուծությունը, առաջարկվեց ընդունել ԵՊՀ ԻՄ 2026թ. առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկումը ի գիտություն, և շարունակել աշխատանքը ֆակուլտետներում/ամբիոններում՝ 2026թ. նոր կրթական ծրագրեր նախագծելու ուղղությամբ։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ 2026թ. առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն,
- Շարունակել աշխատանքը ֆակուլտետներում/ամբիոններում՝ 2026թ. նոր կրթական ծրագրեր նախագծելու ուղղությամբ։

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հետազոտական թեմաների հայտերի ներբուհական մրցույթ հայտարարելու մասին (2025-2026 ուստարի)» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանի հաղորդումը։

Ա. Մակարյանը նշեց, հայտերի ներկայացման վերջնաժամկետը մինչև հոկտեմբերի 31-ն է։ Չնաչափերը մնացել են նույնը, ինչ նախորդ տարի։ Ֆինանսավորման չափը մնացել է նույնը. մինիմալը՝ 300,000 ՀՀ դրամ (տեսական հետազոտությունների համար), առավելագույնը՝ 1 միլիոն ՀՀ դրամ (միջգիտակարգային և փորձարարական բաղադրիչ ունեցող թեմաների համար)։ Թեմայի ղեկավարը պետք է լինի ԵՊՀ ԻՄ աշխատող, և խմբի կատարողների առնվազն 50%-ը պետք է լինեն ԵՊՀ ԻՄ աշխատակիցներ կամ ուսանողներ։ Պարտադիր է ներգրավել առնվազն մեկ ուսանող։ Հաշվետվությունների ներկայացման ժամկետը երեք ամսից դարձել է վեց ամիսը մեկ։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա. Մարգարյանը, ԵՊՀ ԻՄ գրադարանի վարիչ Վ. Պողոսյանը և այլք։

Մասնավորապես Մ. Օթարյանը առաջարկվեց պարտավորություն մտցնել դրամաշնորհի արդյունքում ձեռք բերված սարքավորումների շարունակական սպասարկման ժամկետների վերաբերյալ, ներառել պահանջ, որ արտաքին շահակիցները, որոնք միջնորդում են թեմայի համար (հատկապես տարածաշրջանի խնդիրների վերաբերյալ), ներկայացնեն նաև ֆինանսական առաջարկ (համաֆինանսավորում)։

Այնուհետև Ա. Մակարյանը առաջարկեց հաստատել մրցույթի հրավերի փաթեթը առաջարկվող փոփոխություններով՝ համաձայն հավելված 4-ի։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 83/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է

1. ԵՊՀ ԻՄ 2025-2026 ուստարվա ներքին գիտական դրամաշնորհների ֆինանսավորման նպատակով կազմակերպել գիտական թեմաների հայտերի մրցույթ,
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված 4-ի,
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

Օրակարգի հինգերորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 2024-2025 ուստարվա գործունեության մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ՝ Ս. Աբազյանի հաղորդումը։

Ս. Աբազյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է կրթական-գիտական մի շարք միջոցառումներ։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն իրականացրել է իրազեկում՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի և վերջինիս գործունեության մասին։ Մասնավորապես առաջին կուրսի ուսանողներին ներկայացվել է ուսանողական կառույցի լիազորությունների և ուսանողներին ընձեռած հնարավորություններին։

ԵՊՀ ԻՄ բնական գիտությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է իրազեկում-դասընթաց մուտլ համակարգի մասին, առաջին կուրսեցիներին ներկայացվել է համակարգի հնարավորություններն և կիրառման առանձնահատկությունները։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն համագործակցելով ԵՊՀ ԻՄ գրադարանի հետ, կազմակերպել է գրական ցերեկույթ։ Ուսանողական գիտական ընկերությունը ԵՊՀ ԻՄ գրադարանին է նվիրել մասնագիտական գրականություն /գեղարվեստական/ ՝ սրանով ցանկանալով օժանդակել ուսանողներին ուսումնաօժանդակ գրականության ձեռքբերման գործում։ Համագործակցելով մարզային գրադարանի հետ, իրականացրել է «Հայրենական պատերազմի 80 ամյակը» խորագրով միջոցառում, որի ընթացքում ներկաները ավելի հանգամանորեն տեղեկացվել են Հայրենական պատերազմի մանրամասներին։ Կազմակերպվել է «Բացահայտենք մեր գրադարանը» խորագրով միջոցառում, որի ընթացքում առաջին կուրսեցիները ծանոթացել են գրադարանի կառուցվածքին, առկա գրականությանը, գրադարանից օգտվելու կանոններին։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն համագործակցելով ԵՊՀ ԻՄ կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի հետ, կազմակերպել է «Ավարտական աշխատանք գրելու մեթոդաբանությունը» խորագրով դասընթաց, որի ընթացքում ավարտական կուրսերի ուսանողները ծանոթացել են ավարտական աշխատանքը գրելու կանոններին։

ԵՊՀ ԻՄ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է կինոդիտում՝ նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան տարեդարձին։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն իրականացնում է նաև բանահավաքչական աշխատանքներ, այժմ դրանք հեռավար կերպով ենք շարունակում, նախատեսվում է 2025-2026 ուստարում գործընթացը շարունակել արշավների ձևով։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն համագործակցելով ԵՊՀ ԻՄ Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի հետ, իրականացրել է «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը Այգեհովիտի Արտաշես Վասիլյանի անվան միջնակարգ և Ազատամուտի միջնակարգ դպրոցների աշակերտների հետ։ Խաղի միջոցով էլ ավելի է ամրապնդվում դպրոցի և համալսարանի միջև կապը։

Ուսանողական գիտական ընկերությունը սոցիալական հարթակների միջոցով ուսանողներին պարբերաբար տեղեկացնում է արտահամալսարանական կրթաթոշակների և դրամաշնորհների մասին, նպաստում՝ ուսանողների կամավորական գործունեության մեջ ներգրավվելուն։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ն. Գրիգորյանը և այլք։

Արտահայտվողները կարևորեցին ՈՒԳԸ-ի կանոնադրական դրույթների և տարեկան աշխատանքային պլանի համապատասխանությունը՝ մատնանշվեց, որ ներկայացված հաշվետվությունից կարելի է եզրակացնել, որ ՈՒԳԸ-ի գործունեությունը ավելի շատ նման է Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) գործառույթներին (օրինակ՝ խաղերը), քան գիտական ընկերության։ Առաջարկվեց ՈՒԳԸ-ին կազմակերպել ուսանողական ընթերցումներ,

զեկույցներ կամ դասախոսություններ՝ դեպի գիտություն գնալու համար։ Նշվեց, որ ուսանողները ցուցաբերում են օնլայն ակտիվություն, սակայն խուսափում են դասերից հետո ֆիզիկական միջոցառումներին մասնակցելուց՝ պատճառաբանելով տրանսպորտը և ծանրաբեռնվածությունը։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ N 83/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ Ս. Աբազյանի հաղորդումը ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերության 2024-2025 ուստարվա գործունեության վերաբերյալ ընդունել ի գիտություն,
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության 2024-2025 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

6. Ընթացիկ հարցեր

6.1 Լսեցին՝ «Արտաբյուջետային անվանական կրթաթոշակների մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյանի զեկուցումը։

Մ. Օթարյանը նշեց, որ «ԵՊՀ Արվեստանոց» ծրագրի շրջանակներում մայր բուհը Մասնաճյուղին տրամադրել է ավելի քան 11 միլիոն ՀՀ դրամի չափով գումար արտաբյուջետային միջոցներից, այդ գումարի 7-8 միլիոն ՀՀ դրամը ուղղվելու է Կիրառական արվեստի ֆակուլտետի սարքավորումների գնմանը։ Ծրագիրը նախատեսում է ընդգրկել 20 ուսանողի, ովքեր պետք է պատրաստեն արվեստի գործեր չորս ուղղություններով՝ մանրանկարչություն, խեցեգործություն, բատիկա, գործվածքներ։ Այդ աշխատանքները ԵՊՀ-ն նախատեսում է նվիրել իր հյուրերին, որպես հուշանվերներ։ Նախատեսվում է տրամադրել լրացուցիչ խրախուսական անվանական կրթաթոշակներ այն ուսանողներին, ովքեր կմնան և կաշխատեն արվեստանոցում։ Նշվեց նաև, որ այդ ուսանողների հետ աշխատող դասախոսների համար նախատեսվում է առանձնացվել առանձին բյուջե։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Ն. Գրիգորյանը և այլք։

Մասնավորապես Գ. Հովհաննիսյանը առաջարկեց վերջնարդյունքները ցուցադրել նաև Գեղարվեստի ակադեմիայի ցուցասրահում։

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ N 83/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 8-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ տրամադրած միջոցների հաշվին, «ԵՊՀ Արվեստանոց» ծրագրի շրջանակներում Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների համար սահմանել 20 արտամրցութային անվանական կրթաթոշակներ,
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ